

# «ԲՈՒՈՐՍ ՄԻԱՍԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՔ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԾԱԴՐԵՆՔ ԹԱՅԷՉԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ»

Եկե՛ք այս պայքարը մղենք ի խնդիր ազատ կարծիքի պաշտպանության, ի խնդիր երիտասարդության դերակատարության քաջալերման, ի խնդիր օրենքներու ճամբով կնոջ դերակատարության ամրապնդման:



Մենք ընտրութիւններու պայքարը կը մղենք, որպէսզի գէշը եւ անոր օգտագործումը ըլլան մենաշնորհ՝ Լիբանանեան բաՆակի ձեռքերուն մէջ եւ որպէսզի ապահովուի օրենքի գործադրութիւնը՝ Լիբանանի ամբողջ տարածքին վրայ:

Մենք, որպէս Մարտ 14-ի թեկնածուներ, Յնչակեան կուսակցութեան հետ միասին կողմ ենք հանրապետութեան նախագահի լիազօրութիւններու ամրապնդման՝ ոչ խօսքով, որովհետեւ ան որ կ'ուզէ իրապէս եւ անմիջապէս ամրապնդել առաջին նախագահութեան դիրքերը, պէտք է համաձայն ըլլայ, որ «երաշխաւոր երրորդական մասը» կառավարութեան մէջ ըլլայ հանրապետութեան նախագահին հետ:



Մենք՝ Աշրաֆիէի, Ռոմէյի, Սայֆիի, Յաճընի, Խալիլ Պատուիի եւ Պուրճ Յամուտիի հայրենակիցներ, Յնչակեան կուսակցութիւնը եւ Լիբանանի ժողովուրդին զաւակները միասին պիտի ըլլանք Յունիս 7-ին, միասնաբար քուէարկելու, որովհետեւ կը հաւատանք հայկական դատին, որովհետեւ հաւատարիմ ենք մեր նահատակներուն, մեր գաղափարներուն եւ սկզբունքներուն, որովհետեւ կը մերժենք բռնութիւնն ու անարդարութիւնը, որովհետեւ կը մերժենք հովանաւորչութիւնը՝ որմէ՛ ուզէ ըլլայ, որովհետեւ կը հաւատանք, որ Լիբանանը մերն է եւ մենք երբեք զայն պիտի չլքենք»:

Պէրյուօթի երկրորդ ընտրաշրջանի Սիւնիի համայնքի պատկան աթոռին թեկնածու Տիար Նուհատ Մաշնուք ըսաւ թէ մինչեւ վերջերս կը խորհրդէ խորհրդարանի ընտրութիւնները պիտի ըլլան սովորական գործընթաց մը, սակայն ան ընդունեց որ կը սխալէր իր կարծիքին մէջ, որովհետեւ միայն վերջերս հա-

մուգուեցաւ որ ընտրութիւնները պիտի ըլլային ճակատագրական: Մաշնուք զնահատեց Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութիւնը, որ կառչած մնաց իր սկզբունքներուն եւ հաւատարիմ՝ ազատ, գերիշխան եւ բարգաւաճ Լիբանանի տեսլականին: Ան մերժեց գէնքի ընտրանքը, նշելով որ Մարտ 14-ի Ուժերը կը հաւատան երկխօսութեան: Իր խօսքի աւարտին, Մաշնուք ներկաները հրաւիրեց Յունիս 7-ի օրը քուէարկել կայուն, արդար եւ հզօր պետականութեան:

Այս քննարկումները Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութեան նորընտիր երեսփոխան Ընկեր Սեպուհ Գալիպեան: Յարգելի ընկերը յայտնեց, թէ միջազգային ատենանք պիտի բացայայտէ ճշմարտութիւնը եւ յանցագործները պիտի կրեն իրենց պատիժը: Ընկերը ըսաւ, որ Յունիս 7-ին քուէատուփերուն պիտի ներկայանանք դեմոկրատական, ազատ Լիբանան մը կերտելու հաւատքով: Ընկերը մերժեց բռնութիւնը եւ փողոցի միջոցաւ կամք պարտադրելու ընտրանքը, ընդգծելով որ Մարտ 14-ի Ուժերը կը հաւատան երկխօսութեան եւ ժողովրդավարական եղանակներով պաշտպանելու իրենց իրաւունքը:

Ան ըսաւ. «Լիբանանի ժողովուրդին ձայնով 7 Յունիսին տարբեր ապագայ մը պիտի գրուի երկրին համար: Մենք պիտի չընդունինք, որ յաջորդ 4 տարիները նման ըլլան անցած չորս տա-



րիներուն: Զետեաբար, կ'ըսենք ու կը պնդենք, որ յառաջիկայ ընտրութիւնները ճակատագրական են:

Լիբանանցիները պիտի չարտօնեն, որ կրկնուին անցած տարիներուն սխալները: Ոչ պիտի ըսենք խորհրդարանի եւ սահմանադրական հաստատութիւններու գործունէութեան խափանումին, ոչ՝ Պէրյուօթի առեւտրական կեդրոնի գրաւումին եւ տնտեսութեան անդամալուծումին, ոչ՝ գէնքի գործադրութեան, ոչ՝ Պէրյուօթի ներխուժման, ոչ՝ ճամբաներու եւ օդակայանի փակման, եւ ի վերջոյ, ոչ՝ քաղաքական գազանային սպանութիւններուն:

7 Յունիսին պիտի բարձրացնենք մեր ձայները՝ ըսելու համար, որ մենք կողմ ենք միջազգային դատարանին, ոչ թէ վրէժխնդրութեան, այլ արդարութեան համար, եւ ի խնդիր բոլոր քաղաքացիներու ապահովութեան: Եւ ինչպէս մեր կուսակցութիւնը կանգնեցաւ նահատակ վարչապետ Ռաֆիք Յարիրիի կողքին, այսօր կը կանգնի կողքին անոր յաջորդին՝ Սաստ Յարիրիին, որ կը շարունակէ երթը՝ հետեւելով իր հօր եւ հաւատարիմ՝ անոր դաւանած սկզբունքներուն:

լով հանդերձ, մենք կառչած կը մնանք մեր հայկական ինքնութեան եւ գաղափարական իրայայտութեան:

Մենք յոյս ունինք, որ երեսփոխանական ընտրութիւններէն ետք, Մարտ 8-ի եւ Մարտ 14-ի Ուժերը ի մի կու գան «22 Նոյեմբեր»ի հովանիին տակ, իբրեւ բոլորս միացնող թուականը Լիբանանի անկախութեան:



Եկե՛ք բոլորով համախմբուինք Լիբանանի անկախութեան գաղափարին շուրջ եւ լծուինք Թայեֆի համաձայնագրի գործադրութեան:

Եկե՛ք բոլորով համաձայնինք ընտրական նոր եւ արդիական օրենքի մը շուրջ, որ պիտի երաշխաւորէր Լիբանանի իրայայտութիւնը՝ իբրեւ խաղաղ գոյակցութեան հայրենիք:



Եկե՛ք բոլորով համախմբուինք հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյմանի եւ պետութեան հաստատութիւններուն շուրջ, որպէսզի մասնակցինք երկրի վերականգման աշխատանքներուն:

Որպէս Յնչակեան կուսակցութիւն, պիտի աշխատինք ի խնդիր Մարտ 14-ի Ուժերու ամբողջական ընտրացանկներուն յաջողութեան: Պէրյուօթ Առաջինի մէջ պիտի քուէարկենք յօգուտ մեր կուսակցութեան առաջադրած թեկնածու Մեթր Յերժ Թուր-սարգիսեանին, Ռամվալար Ազատական Կուսակցութեան թեկնածու Ժան Օդասապեանին, ինչպէս նաեւ դաշնակիցներ Միշէլ Ֆարաճի, Նայլա Թուէյնիի եւ Նետիմ Ժըմէյիլի:

## ՄԱՆՉԵՏԹՐ ԵՈՒՆԱՅԹԸ ԱՆԳԼԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ

Մանչեսթըր Եունայթըտ շահեցաւ Անգլիոյ ֆութբոլի ախոյեանութեան տիտղոսը՝ երբ Արսենալի հետ, իր դաշտին վրայ արձանագրեց 0-0 հաւասարութիւնը մը:



Արդարեւ, ախոյեանութեան նախավերջին օրուան մրցումներուն, Մանչեսթըր Եունայթըտին կէտ մը բաւարար էր, որ իր պատմութեան մէջ 18րդ անգամ ըլլալով դարձաւ Անգլիոյ ախոյեան:

Նշենք, թէ Մանչեսթըրի անմիջական մրցակիցը՝ Լիվըրպոլը՝ այսօր պիտի մրցի Ուեսթ Կրոմֆրիչ Ալպիսի դէմ:



Այսօր ամենայն հպարտութեամբ կը յայտարարենք, որ մենք մաս կը կազմենք 14 Մարտի Ուժերու, որոնք հետ մեզ միացնող անկախական գաղափարներն են եւ հասարակաց մտապատկերը՝ երկրի ապագային: Մարտ 14-ի Ուժերուն մաս կազմե-

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**  
Հայկ Թիլպեանի մահուան 10-րդ տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 17 Մայիս 2009-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ներ Նուհատ Մաշնուք, Մեթր Յերժ Թուրսարգիսեան, պետական նախարար Ժան Օդասապեան, ներկայ երեսփոխաններ Ընկ. Տոքթ. Եղիկ ճերճեան եւ Պարոն Յակոբ Գասարճեան, որոնք արժանացան ներկաներուն ծափահարութեան: Այս միջոցին տեղի ունեցաւ հրավառութիւն եւ Սահակեանի երկնակամարը փայլեցաւ գոյնզգոյն ուրախութեան բոցերով: Հանրահաւաքի վերջաւորութեան գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, ուր սիրուած երգիչներ Կարօ Կապուսեան եւ Պերճ Սարգսեան յաջորդաբար միւսչէն երկնայեան ուշ ժամեր ներկաները ոգեւորեցին իրենց ազգային- հայրենասիրական ճոխ երգերով:

**ԱՅՍՕՐ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ**  
17 ՄԱՅԻՄ  
1840՝ մահացաւ ջութակահար, յորինող Նիքոլո Փականին:  
1900՝ ծնաւ Այաթոլլա Խումէյնին:  
1904՝ ծնաւ ֆրանսացի դերասան Ժան Կապլենը:

**Կ՝ՈՒԶՈՒԻ**  
Kodak Հաստատութիւնը կարիքը ունի electronic ուսանած երիտասարդի մը: Հետաքրքրուողները կրնան հեռագրել 03-286678 թիւին կամ CV-ն ուղարկել հետեւեալ e-mail-ի: [kanekour@dm.net.lb](mailto:kanekour@dm.net.lb)

**ARARAD DAILY NEWSPAPER**  
Tel. - Fax: 01-56 55 99  
P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON  
Website: [www.araraddaily.org](http://www.araraddaily.org) e-mail: [ararad@terra.net.lb](mailto:ararad@terra.net.lb)  
صدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.)  
المدير المسؤول: ابيسوغوم كريشيكيان